ԱՄՆ

# Հայաստանի 1918-20 թթ. Հանրապետությանը նվիրված գիտաժողով

Այսօր, մայիսի 28-ին, Կալիֆոռնիայի համալսարանի (Լոս Անջելես) ժամանակակից հայ պատմության ամբիոնում կսկսվի երկօրյա միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայաստանի 1-ին Հանրապետության՝ 75 տարիների հետադարձ հայացքով: Գիտաժողովը կբացի կազմակերպիչ ամբիոնի վարիչը՝ Հայաստանի առաջին Հանրապետության հայտնի մասնագետ դոկտ. Ռիչարդ Հովհաննիսյանը, որը կխոսի Հայաստանի Հանրապետության 75-րդ տարեդարձի մասին: Այնուհետեւ ներկաները կծանոթանան Հայաստանի պատմության ինստիտուտի վարիչ Հրանտ Ավետիսյանի դասախոսությանը «Բրեստ-Լիտովսկի դաշինքը եւ հայ-գերմանական հարաբերություններ, 1918» վերնագրով: Նույն ինստիտուտից հրավիրված Գայանե Մախմուրյանը կներկայացնի «Մեծ Բրիտանիան եւ Հայաստանի Հանրապետությունը» զեկուցումը, որից հետո Երեւանի պետհամալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ Լենդրուշ Խուրշուդյանը դասախոսություն կկարդա «Սովետա-թուրքական հարաբերությունները եւ Հայաստանը, 1919-1921 թթ.» վերնագրով: Առաջին օրվա բոլոր զեկուցումները կհնչեն հայերեն, Հոլիվուդի «Այվազյան» դահլիճում:

Երկրորդ օրվա զեկուցումները կլինեն անգլերեն, Կալիֆոռնիայի համալսարանի «Դիքսոն» սրահում:

Մոսկվայի Էթնոգրաֆիայի ինստիտուտից Սերգեյ Արությունովը կխոսի «Կովկասի հայերը 1918-1920 թթ.» թեմայի շուրջ, Մաունտ Հոլիյոք քոլեջից Ստեֆան Ֆ. Ջոնսը կներկայացնի «Հայ-վրացական հարաբերությունների առանցքը» նյութը, Փենսիլվանիայի համալսարանից Նորա Դուդվիքը կանդրադառնա «Հայ-ադրբեջանական հարաբերությունները եւ Ղարաբաղը» հարցին: Այնուհետեւ, UCLA-ի համալսարանից Կարապետ Մուրադյանը դասախոսություն կկարդա «Ներքին քաղաքականությունը Հանրապետությունում» թեմայով: Փարիզի Սորբոնի համալսարանից Անահիտ Տեր-Մինասյանը կխոսի իր հոր՝ Ռուբեն Տեր-Մինասյանի մասին «Անհաշտները» վերնագրի տակ, իսկ Ռուբինա Փիրումյանը (UCLA) կանդրադառնա «Դաշնակ-բոլշեւիկ հարաբերություններ. Համակեցության հարց» թեմային:

Նույն օրը, հետմիջօրեին, Փիցբուրգի համալսարանից Վեռնոն Ասպատուրյանը կզեկուցի «Հայաստանը միջազգային ասպարեզում, 1918-1920 թթ.» հարցի շուրջ, UCLA-ից Հարի Բերբերյանը կբացատրի «Հայկական զույգ պատվիրակություններ Փարիզում. որա՞կ, թե անհրաժեշտություն» հարցը, մինչ նույն համալսարանի դասախոսներից Մայքլ Բլեյքը կմեկնաբանի «Մ. Նահանգները ու հայկական հարցը»: Գլենդեյլի քաղաքային քոլեջի դասախոս Լեւոն Մարաշլյանը կխոսի «Տնտեսական ազդակը 1919-1921 թթ.» հարցի շուրջ, Երեւանի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտից Գրիգոր Արեշյանը կզեկուցի «Ժողովրդավարական հասարակություն կամ ազդեցիկ պետություն. Շարունակվող հայկական դիլեմա՞» թեմայով, ամերիկյան Ռենդ կորպորեյշընից Ժոզեֆ Քեչիչյանը կներկայացնի «Հայկական արտաքին քաղաքականությունը 1918-1920 եւ 1993 թթ.» զեկուցումը: Վերջում դոկտ. Ռիչարդ Հովհաննիսյանը կամփոփի եւ եզրակացություններ կանի կարդացված բոլոր զեկուցումներից:

Գիտաժողովը, ինչպես գրված է երկլեզվյան ծանուցագրի մեջ, նյութական աջակցություն է վայելում IREX-ի (Միջազգային հետազոտությունների եւ փոխանակման խորհուրդ), ինչպես նաեւ Հայկական կրթական հիմնադրամի եւ «Համազգային» հայկական մշակութային ընկերակցության: ■